ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Խաչիբաբյան Սոսե Սերգեյի

Ավազանկարչությունը որպես կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանման միջոց

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

Երևան 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Հոգեբանական գիտությունների թեկնածու **Իրինա Ռյուրիկի Խանամիրյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան** հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Նարինե Ասքանազի Հարությունյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2021թ. Հոկտեմբերի 1-ին, ժամը 14:00, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. օգոստոսի 17-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դ.Ռ. Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արդի դարաշրջանի մարտահրավերների պայմաններում մեծանում է յուրահատուկ, ստեղծագործ մտածելակերպով մարդկանց հանդեպ պահանջարկը: Աշխատանքի մեխանիկական կատարումը վաղուց ի վեր մեծ հետաքրքրություն չի առաջացնում հասարակական-մշակութային և գիտատեխնիկական կյանքի առաջատար ոլորտներում, քանի որ մեխանիկական աշխատանքի հիմնական մասը առավել արագ և անսխալ իրականացնում են էլեկտրատեխնիկական ժամանակակից սարքավորումները: Մարդու արարող, նորը ստեղծող, այլաբանորեն մտածող, այլ խոսքերով՝ ստեղծագործ էությունն է, որ անփոխարինելի է ցանկացած տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում:

Մյուս կողմից, այսօր անվիճելի է թվային տեխնոլոգիաների զբաղեցրած տեղը ժամանակակից մարդու կյանքի ամենատարբեր ոլորտներում: Դեռ մանկությունից՝ մարդը գտնվում է տեխնոլոգիապես հագեցված պայմաններում, որոնցից ամբողջապես զերծ մնալը իրատեսական չէ, երբեմն նաև ոչ նպատակահարմար: Սա իր հերթին սպառնում է այնպիսի խնդիրներով, ինչպիսիք են *իրական* զգացողություններից, ապրումներից, գործունեության ձևերից երեխայի հեռացումը, հուզական և վարքային տարաբնույթ դժվարությունները, զարգացման խնդիրները: Ստեղծագործությունը՝ որպես ակտիվության ձև, այն ուղիներից է, որ դեռևս վաղ տարիներից կարող է ապահովել երեխայի կապը աշխարհի հետ՝ ընդ որում ոչ միայն և ոչ այնքան հարմարողական, այլև վերափոխող, ստեղծարար բնույթի կապը: Սակայն ժամանակակից դարաշրջանի փոփոխությունները երբեմն լուրջ սպառնալիք են ներկայացնում նույն այդ ստեղծագործական կապի համար. համակարգիչները, գրավիչ ձայնային, լուսային և պատկերային էֆեկտներով գաղջեթները, հեռախոսներն ու այլ տեխնիկական սարքերը հաճախ լուրջ «մրցակից» են դառնում նկարչական նյութերի, կավի, ավազի և այլ իրական, «շոշափելի» ստեղծագործական գործիքների համար:

Փաստորեն, մի կողմից վիթխարի տեմպերով զարգացող աշխարհում օրեցօր ավելի արդիական է դառնում մարդկային ստեղծարար ռեսուրսների և դրանց կրողի՝ ստեղծարար մարդու հանդեպ պահանջարկը, մյուս կողմից նույն այդ վիթխարի տեմպերով զարգացումը ստեղծարարության դրսևորման և զարգացման սպառնալիք է դառնում:

Ինչպես նշել է ամերիկացի նկարչուհի, արվեստագետ, «աջկիսագնդային նկարչության» մեթոդիկայի հիմնադիր Բ. Էդվարդսը, «ժամանակակից աշխարհում տեղի ունեցող փոփոխություններն այնքան վիթխարի արագությամբ են կատարվում, որ առաջին հերթին պահանջում են նորարարական պատասխաններ: Հենց այս անհրաժեշտությունը մարդկանց ստեղծագործական ինքնարտահայտման բազմադարյա պահանջին զուգահեռ նշանակալիորեն մեծացրել է հետաքրքրությունը ստեղծարարություն հասկացության նկատմամբ, ինչի մասին է վկայում այս երևույթին նվիրված հրապարակումների աճող թիվը» (Էդվարդս, 2000): Այցելուակենտրոն հոգեթերապիայի հիմնադիր, հումանիստական ուղղության ներկայացուցիչ Կ. Ռոջերսը, իր «Անձի կայացում» աշխատանքում ևս անդրադարձել է ստեղծագործության և ստեղծարար անհատների նկատմամբ օրեցօր աճող

հասարակական պահանջին (Ռոջերս, 1994): Մեկ այլ գիտնական՝ Ն. Ռոջերսը, իր «Ստեղծագործական կապ» գրքում ընդգծում է ստեղծարարության հիմնահարցը ևս մեկ համամարդկային, գլոբալ հարցի համատեքստում: Նա սահմանում է ստեղծագործությունը՝ որպես «անձին վերափոխող գործընթաց, որը չի տեղավորվում որևէ դոգմայի կամ սահմանների մեջ»: Ըստ հեղինակի՝ բռնապետ առաջնորդները դարեր շարունակ ճնշել են ստեղծագործությունը և ինքնարտահայտումը, որովհետև այն նպաստում է անկախ մտածողությանը, ինքնաբուխությանը, ինքնահարգանքին, կատարելագործմանը և ուժեղացնում է մարդու հավատը սեփական ուժերի նկատմամբ (Ռոջերս Ն., 2015): Համաձայն Ն. Ռոջերսի՝ այն մարդիկ, ովքեր նպաստում են ստեղծագործական գործընթացի ծննդին, կարևոր դեր են խաղում ժամանակակից, համամարդկային խնդիրներով լի աշխարհում, գլոբալ ճգնաժամի պայմաններում, երբ մարդկությունը կարող է կործանել ինքն իրեն միջուկային ճառագայթման, օզոնային ճեղքերի լայնացման, թունաքիմիկատների կիրառման, բռնությունների աճի ճանապարհներով: Հեղինակը որպես այս պոտենցիալ վտանգներից խուսափելու ելք տեսնում է ստեղծարարության խթանումը՝ մասնավորապես նշելով, որ մարդկությանը անհրաժեշտ է ստեղծագործական հակազդում համաշխարհային իրադարձությունների նկատմամբ, այլապես բռնությունը և մարդկանց զանգվածային ոչնչացումը կշարունակվեն դիտվել որպես աշխարհը նվաճելու միջոցներ, իսկ բարձր տեխնոլոգիաների անվերահսկելի զարգացումը՝ առաջընթաց (Ռոջերս Ն., 2015):

Մասնագիտական աղբյուրների վերլուծությունը մեզ թույլ տվեց սահմանել ստեղծարարությունը՝ որպես *անձի ինտեգրալ, բազմագործոն հատկություն, որը կազմված է կոգնիտիվ, հուզական, անձնային բաղադրիչներից*: «Բաղադրիչ» եզրույթը կիրառել ենք՝ նկատի ունենալով ստեղծարարության բովանդակությունը կազմող մասերը՝ ստեղծարար անձի բնութագրիչ կողմերը: Ընդ որում, վերջիններիս բավականին լայն շարքի ուսումնասիրությունը թույլ տվեց մեզ առանձնացնել առավել առանցքային, կենտրոնական բաղադրիչներ, որոնք կազմում են ստեղծարարության հիմքը: Ինչ վերաբերում է ստեղծարարության պոտենցիալ (ներուժ) և ակտուալ (ստեղծագործական ակտ) կողմերին, ապա այս մոտեցումը ևս հարում է ինտեգրալ մոտեցմանը՝ սույն աշխատանքի սահմաններում դիտարկելով ստեղծարարությունը՝ որպես ստեղծագործական ներուժի և ստեղծագործական ակտի միասնություն:

Ընդ որում հատկանշական է, որ այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Կ. Ռոջերսը, Հ. Գարդները, Է. Նոյմանը, ստեղծարարության անկումը կապում են դպրոցական կյանքի, կրթության ազդեցության հետ՝ համարելով, որ ուսումնական գործունեությունը շրջանակների մեջ է դնում անձի ստեղծարար էությունը և այն, հնարավորություն չունենալով դրսևորվել, աստիճանաբար մարում է: Ուստի զարմանալի չէ, որ տարբեր երկրներում ներկայումս հատուկ ուշադրություն է դարձվում այս խնդրին՝ փորձ անելով կանխարգելել ստեղծարարության նվազման խնդիրը, գլխավորապես՝ կրթական գործընթացի բարեփոխումների ճանապարհով:

Հայաստանյան կրթական համակարգը ևս բավականին խոցելի է ստեղծարարությունը խթանելու և դրա դրսևորումը խրախուսելու առումով:

Կրթական գործընթացը ներկայումս, կարելի է ասել, անցումային փուլում է գտնվում՝ հին ու նոր մոտեցումների, կարգերի, սկզբունքների միջև, և այս պայմաններում դեռևս բաց է մնում ստեղծարարության խթանման ուղղությամբ կոնկրետ քայլեր, համակարգված մոտեցումներ ձեռնարկելու ռազմավարության հարցը:

Հիմք ընդունելով հումանիստական ուղղության ներկայացուցիչ Ա. Մասլոուի գիտական մոտեցումները ստեղծարարության էության, ինչպես նաև դրա հնարավոր զարգացման հարցի վերաբերյալ՝ համարում ենք, որ ստեղծարարությունը մարդուն ի ծնե բնորոշ ինտեգրալ հոգեբանական երևույթ է, նրա էության անբաժան մաս, որը նույնիսկ հարաբերական անկման փուլերում պասիվ կերպով առկա է լինում և հնարավոր է այն *խթանել* համապատասխան ազդեցությամբ՝ պոտենցիալ վիճակից բերելով ակտուալ դաշտ՝ ստեղծագործական ակտիվության (Մասլոու,1999): Կարևորում ենք ստեղծարարության ուսումնասիրությունը հատկապես կրտսեր դպրոցական տարիքում՝ հիմք ընդունելով այն տեսություններն ու գիտական մոտեցումները, ըստ որոնց այս տարիքային փուլը զգայուն և խոցելի շրջան է ստեղծարարության պահպանման և ամրապնդման առումով (Գարդներ, 1994, Էրիքսոն, 1996, Ֆրոմ, 2011, Ռոջերս, 1994):

Վերլուծելով գիտական աղբյուրները (Կապաչիոնե, 2005, Միլներ, 2010, Էդվարդս, 2000)՝ նկատում ենք, որ ստեղծարարությունը առավել արդյունավետ է խթանել արվեստի, մասնավորապես՝ նկարչության ոչ ստանդարտ եղանակներով, որոնց դեպքում անձի կողմից վերահսկողությունը ցածր է, նա ազատ է ստեղծագործելու ինքնաբուխ կերպով՝ լիարժեք դրսևորելով իր ստեղծագործական ներուժը: Այս հանգամանքը կարևորելով՝ նպատակահարմար ենք գտել ուսումնասիրել նկարչական մի նոր, ոչ ստանդարտ եղանակի՝ ավազանկարչության էությունը և առանձնահատկությունները՝ ստեղծարարության խթանման համատեքստում:

Ավազանկարչությունը նկարչական յուրահատուկ եղանակ է, որի՝ որպես հոգեբանական աշխատանքի գործիքի վերաբերյալ մինչ օրս չկան խորը մասնագիտական հետազոտություններ: Կարևոր ենք համարել ավազանկարչության՝ որպես ստեղծարարությունը խթանող միջոցի համակողմանի և խորը ուսումնասիրությունը՝ դուրս բերելու բոլոր այն առանձնահատկությունները, որոնց հաշվին մեթոդը կարող է ծառայել առաջադրված հետազոտական նպատակին: Աշխատանքում ներկայացված է ավազանկարչության այդ առանձնահատկությունների վերլուծությունը ստեղծարարության կոնկրետ բաղադրիչների խթանման տեսանկյունից, մեր կողմից առաջարկվել է ստեղծարարության խթանման մոդել, որի հիման վրա կազմվել է ավազանկարչության մեթոդով հեղինակային ծրագիր:

Այսպիսով, հետազոտության և ներկայացվող խնդրի փորձարարական վերլուծության **արդիականությունը** պայմանավորել են հետևյալ գործոնները.

- քաղաքական, հասարակական, սոցիալական ոլորտներում գլոբալ փոփոխությունները, որոնք ժամանակակից մարդուց պահանջում են նոր և ստեղծագործ մոտեցումներ, ինչն իր հերթին պայմանավորում է ստեղծարար մարդկանց հանդեպ աճող պահանջարկը,

- վիթխարի տեմպերով փոփոխվող աշխարհում ստեղծարարության հիմախնդրի նոր ուսումնասիրությունների և ձևակերպումների անհրաժեշտությունը,
- մանկական ստեղծարարության հիմնախնդրի ուսումնասիրությունների պակասը,
- նոր ժամանակաշրջանում ստեղծարարության խթանման արդյունավետ ուղիների հայտնաբերման կարևորությունը,
- ավազանկարչության՝ որպես հոգեբանական զարգացնող աշխատանքի մեթոդի ուսումնասիրության բացը:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: Մասնագիտական գրականության վերլուծությունը թույլ է տալիս կատարել դիտարկումներ ստեղծարարության խթանման եղանակների՝ մասնավորապես ավազանկարչության՝ որպես ստեղծարարությունը խթանող մեթոդի ուսումնասիրման ուղղությամբ մինչ այժմ կուտակված գիտական նյութի վերաբերյալ:

Անձի ստեղծագործական ակտիվության, ստեղծարարության և դրա հնարավոր զարգացման վերաբերյալ հարցերը դարեր շարունակ հետաքրքրել են ինչպես հոգեբանական գիտության, այնպես էլ արվեստի, մանկավարժության և այլ ոլորտների ներկայացուցիչներին՝ պայմանավորված թե՛ բուն երևույթի առանձնահատկություններով, թե՛ հասարակական-տնտեսական, քաղաքական, գիտական կյանքում ունեցած նշանակությամբ: Այս է պատճառը, որ ստեղծարարությունը գիտական հանրության մեջ հատկապես վերջին տասնամյակներում բավականին զգալի հետաքրքրություն առաջացնող, այդուհանդերձ նաև ոչ բավարար չափով ուսումնասիրված երևույթ է: Այսպես, մինչ այժմ վիճելի են մնում ստեղծարարության վերաբերյալ այնպիսի հիմնարար հարցերը, ինչպիսիք են ստեղծագործական ներուժի մասին պատկերացումները (Իլյինիխ, 2014), ստեղծարարության՝ որպես անձնային որակի կամ կոգնիտիվ, ինտելեկտուալ հատկության ընդունումը, ստեղծարարության համընդհանուր և բոլոր մարդկանց հատուկ լինելը կամ հատուկ ստեղծագործական հակումներ ունեցողներին բնորոշ լինելը, ստեղծարարության «բովանդակության», բաղադրիչների հարցը, ստեղծարարության զարգացման պայմանների և միջոցների հարցը, մանկական ստեղծարարության հիմնահարցը և այլն: Հարցերի այս շարքը, ինչպես նաև ստեղծարար անձի հանդեպ աճող հետաքրքրությունը:

Ստեղծարարությունը, անցնելով տեսական տարբեր խոշոր ուղղությունների (հոգեվերլուծություն, կոգնիտիվ հոգեբանություն, հումանիստական հոգեբանություն և այլն) բովով՝ մեզ է հասել քիչ թե շատ ամբողջական և բազմակողմանի վերլուծություններով, որտեղ ստեղծարար անձի մասին գիտական պատկերացումների զարգացման մեջ մեծ է հատկապես հումանիստական դպրոցի դերը: Այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Ա. Մասլոուն, Կ. Ռոջերսը, Է. Ֆրոմը մեծ ներդրում են ունեցել ստեղծարարության՝ որպես հատուկ տաղանդ, ընդունակություն դիտարկելուց դեպի բոլոր մարդկանց ի ծնե բնորոշ անձնային ինտեգրալ որակ դիտարկելու անցման պրոցեսում: Մեծ է նաև հումանիստական ուղղության ժամանակակից ներկայացուցիչ Ն. Ռոջերսի դերը, ով իր

«Ստեղծագործական կապ» աշխատանքում մեկնաբանել է ստեղծարարությունը՝ որպես շարժիչ ուժ, որին ձգտում է անձը ամբողջ կյանքի ընթացքում:

Ստեղծարարության վերաբերյալ հետազոտությունների մեջ գրեթե մշտապես կենտրոնական դիրքում է մանկական ստեղծարարության, որոշակի տարիքում դրա անկման, ինչպես նաև հնարավոր վերականգնման հարցը: Այս հիմնահարցին ուշադրություն են դարձրել տարբեր հոգեբանական ուղղությունների ներկայացուցիչներ՝ Ա. Մասլոուն, Է. Ֆրոմը, Կ. Ռոջերսը, Է. Նոյմանը, Հ. Գարդները և այլք:

Ստեղծարարության զարգացման ուղիների, մեթոդների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ մինչ այժմ գոյություն չունի միասնական մոտեցում ստեղծարարության զարգացման հնարավորության մասին: Դիտարկելով հարցը մեր աշխատանքի տեսամեթոդաբանական ուղղվածության (ստեղծարարությունը՝ որպես բոլոր մարդկանց բնորոշ, պոտենցիալ կերպով առկա որակ) համատեքստում՝ ստեղծարարության հնարավոր զարգացման ուղիների բազմազանության մեջ հարկ ենք համարում առանձնացնել հատկապես հումանիստական հոգեբանության ներկայացուցիչների ներդրումը, մասնավորապես Ա. Մասլոուի՝ պոտենցիալ ստեղծարարությունը համապատասխան ազդեցությամբ *խթանելու* մասին գաղափարներով, իսկ այդ ազդեցությունը հումանիստական հայացքների ներքո դիտարկվում է առավելապես ազատ, անորոշ ստեղծագործական նյութի, ստեղծագործական գործընթացի՝ արդյունքի համեմատ առավելության և այլ սկզբունքներով: Ստեղծարարության խթանման այսօրինակ եղանակների մշակման մեջ նշանակալի է հատկապես Լ. Կապաչիոնեի («Մյուս ձեռքի ուժը կամ ինչպես ձախ ձեռքի օգնությամբ ակտիվացնել գլխուղեղի աջ կիսագնդի հնարավորությունները», 2005), Մ. Միլների («Նկարել չիմանալու մասին», 2010), Բ. Էդվարդսի («Ձեր ներսի նկարիչը», 2000) ավանդը: Այս հեղինակներն իրենց աշխատանքներում անդրադարձել են նկարչության ոչ ավանդական եղանակներին՝ պնդելով, որ այս դեպքում անձի կողմից վերահսկողությունը ցածր է, նա ազատ է ստեղծագործելու ինքնաբուխ կերպով՝ լիարժեք դրսևորելով իր ստեղծագործական ներուժը:

Ավազանկարչության՝ որպես ստեղծարարության խթանման այլընտրանքային եղանակի մասին՝ որպես հոգեբանական աշխատանքի գործիքի վերաբերյալ մինչ օրս չկան խորը մասնագիտական հետազոտություններ, այլ առկա են միայն այս եղանակը իրենց պրակտիկ աշխատանքում կիրառող մասնագետների մասնավոր դիտարկումներ: Ավազանկարչության վերաբերյալ եզակի գրքերում (Վոյնովա, 2014, Զեյց, 2010) մեթոդը ներկայացված է առավելապես որպես նկարչության նոր եղանակ, ցույց են տրված ավազով նկարելու որոշ եղանակներ, սակայն առկա չեն խորքային վերլուծություններ մեթոդի հոգեբանական ազդեցության վերաբերյալ:

Սույն աշխատանքում փորձել ենք լրացնել այդ բացը, հետազոտել ավազանկարչությունը՝ որպես ստեղծարարության խթանման հոգեբանական մեթոդ՝ վերլուծության ենթարկելով մեթոդի տարբեր առանձնահատկությունները ստեղծարարության բաղադրիչների խթանմանը նպաստելու տեսանկյունից:

Աշխատանքի **նպատակն** է՝ բացահայտել ավազանկարչության դերը կրտսեր դպրոցական երեխաների ստեղծարարության խթանման գործընթացում:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1. Գիտական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա վերլուծել հումանիստական ուղղության մեջ ստեղծարարություն երևույթի, մանկության շրջանում դրա դրսևորումների և խթանման հնարավորությունների վերաբերյալ հիմնական մոտեցումները:
2. Համակողմանի վերլուծության միջոցով դուրս բերել ստեղծարարության կառուցվածքի առանցքային բաղադրիչները:
3. Վերլուծել և դուրս բերել ավազանկարչության՝ ստեղծարարության խթանմանը նպաստող հիմնական առանձնահատկությունները:
4. Մշակել և կազմել ստեղծարարության բաղադրիչների խթանման հստակ մեթոդաբանություն և դրա վրա հիմնված՝ ավազանկարչության հեղինակային ծրագիր:
5. Բացահայտել ավազանկարչության հեղինակային ծրագրի կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցականների ստեղծարարության բաղադրիչների խթանման գործընթացում:

Վարկածը՝ ավազանկարչության նպատակաուղղված կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների ստեղծարարության խթանմանը՝ ստեղծարարության բաղադրիչների վրա բազմաֆունկցիոնալ և համակողմանի ազդեցության շնորհիվ:

Ուսումնասիրության **օբյեկտն** է՝ կրտսեր դպրոցականների ստեղծարարության բաղադրիչները:

Հետազոտության **առարկան** է՝ ավազանկարչության նպատակաուղղված կիրառումը՝ որպես կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ստեղծարարության խթանման միջոց:

Աշխատանքի **տեսամեթոդաբանական հիմքն** են հանդիսացել հումանիստական ուղղության (Ա. Մասլոուի, Կ. Ռոջերսի, Է. Ֆրոմի) դրույթները մարդու ստեղծարար էության, ստեղծարարության՝ որպես անձն ընդգրկող, փոխակերպող, դրական ինքնավերաբերմունք ձևավորող ուժի, ինչպես նաև ստեղծարարության բազմագործոնային տեսության (Տ. Լյուբարտ) հայացքները ստեղծարարության կառուցվածքի և բաղադրիչների վերաբերյալ: Ստեղծարարության էության, ինչպես նաև դրա խթանման ուղիների վերաբերյալ մեր պատկերացումները հիմնվում են գլխավորապես Ն. Ռոջերսի («Ստեղծագործական կապի» տեսություն, մարդակենտրոն հոգեթերապիա) հայացքների վրա, ով ստեղծարարությունը մեկնաբանում էր որպես շարժիչ ուժ, որին ձգտում է անձը իր ողջ կյանքում, և որը հնարավոր է խթանել համապատասխան պայմանների ստեղծմամբ: Ավազի՝ որպես ստեղծարարության խթանման նյութի ընտրությունը փորձել ենք հիմնավորել Լ. Շտեյնխարդտի («Յունգյան ավազաթերապիա» աշխատանքում արտացոլված), Ն. Սակովիչի, Տ. Զինկևիչ-Եվստիգնեևայի մոտեցումներով, ովքեր դիտարկում են ավազը՝ որպես անձի ազատ ստեղծագործող և արարող մասը արթնացնող նյութ: Նկարչության ոչ ավանդական եղանակների՝

որպես ստեղծարարության խթանման առավել արդյունավետ միջոցների մասին մեր մոտեցումները հիմնված են իտալացի նկարչուհի, մանկավարժ, արվեստագետ Լ. Կապաչիոնեի՝ ձախ ձեռքով նկարչության մեթոդիկայի, Մ. Միլների՝ ազատ նկարչության կարևորության, Բ. Էդվարդսի՝ աջկիսագնդային նկարչության վերաբերյալ պատկերացումների վրա: Կրտսեր դպրոցական տարիքում ստեղծագործելու՝ որպես տարիքային կոնֆլիկտի հաղթահարման ճանապարհի մասին մեր պատկերացումները գլխավորապես հիմնված են ամերիկացի հոգեբան Է. Էրիքսոնի գիտական հայացքների վրա:

Բոլոր վերոնշյալ տեսությունները հիմք են հանդիսացել հետազոտության մեթոդաբանական սկզբունքների, մոտեցումների ձևավորման վրա, որոնք գործառնական մոդելի տեսքով ներկայացված են աշխատանքի 3.1. ենթագլխում:

Հետազոտության կազմակերպումը և մեթոդները.

Հետազոտության փորձարարական հատվածը (հետազոտական գործիքների ընտրություն, ընտրանքի հավաքագրում, ձևավորող գիտափորձի նախնական գնահատում, միջամտություն, վերջնական գնահատում, արդյունքների մշակում և վերլուծություն) տևել է 8 ամիս և ընթացել է 2017 թվականի դեկտեմբերից 2018 թվականի հուլիս ամիսներին, իսկ ամբողջական հետազոտությունը՝ ներառյալ հետազոտական խնդիրների ձևակերպումը, գրականության վերլուծությունը, մեթոդաբանության մշակումը, զարգացնող ծրագրի կազմումը տևել է շատ ավելի երկար՝ շուրջ վեց տարի:

<u>Տվյալների հավաքագրման մեթոդներ.</u>

- թեստավորում,
- անկետավորում,
- զրույց:

<u>Տվյալների վերլուծության մեթոդներ.</u>

Սթյուդենտի t-պարամետրային չափանիշը կախյալ և անկախ խմբերի համար:

<u>Ձևավորող գիտափորձ</u>

Ձևավորող գիտափորձը իրականացվել է երեք փուլերով՝ նախնական գնահատում, միջամտություն, վերջնական գնահատում: Որպես միջամտություն կիրառվել է ավազանկարչության մեթոդը:

Գիտական նորույթն է՝

- Ավազանկարչությունը վերլուծության է ենթարկվել՝ որպես հոգեբանական աշխատանքի մեթոդ, դուրս են բերվել ավազանկարչության մեթոդի էական առանձնահատկությունները և դրանց դերը ստեղծարարության առանցքային բաղադրիչների խթանման ուղղությամբ:
- Մշակվել է կրտսեր դպրոցականների ստեղծարարության խթանման գործառական մոդել՝ հիմնված ստեղծարարության մեկնաբանման հումանիստական ուղղության մոտեցումների վրա:
- Աշխատանքի սահմաններում ստեղծարարության խթանման գործառական մոդելի հիման վրա կազմվել և իրականացվել է ավազանկարչության հեղինակային ծրագիր՝ ուղղված կրտսեր դպրոցականների ստեղծարարության բաղադրիչների խթանման նպատակով:

Տեսական նշանակությունը.

- Ստեղծարարությունը և դրա խթանումը վերլուծության է ենթարկվել հումանիստական ուղղության ինչպես դասական տեսությունների, այնպես էլ նոր, մասնավորապես՝ Ն. Ռոջերսի ստեղծագործական կապի տեսության համատեքստում:
- Իրականացվել է ստեղծարարության բովանդակության համակարգային վերլուծություն, ինչի արդյունքում դուրս են բերվել ստեղծարարության առանցքային բաղադրիչները:
- Կատարվել է ավազանկարչության առանձնահատկությունների խորքային վերլուծություն, ինչը թույլ կտա ընդլայնել պատկերացումները նկարչության այս եղանակի և դրա հոգեբանական նշանակության վերաբերյալ:

Գործնական նշանակությունը.

- Աշխատանքի շրջանակներում մշակվել և իրականացվել է հեղինակային ծրագիր, որը կհարստացնի ստեղծարարության խթանմանն ուղղված հոգեբանական աշխատանքի գործիքակազմը:
- Ավազանկարչության առանձնահատկությունների բազմակողմանի վերլուծությունների արդյունքում ստացված տվյալները ներառվել են «Արտ-թերապևտիկ մեթոդները խորհրդատվության մեջ» և «Արտ-թերապիան երեխաների և դեռահասների հետ աշխատանքում» դասընթացների մեջ (ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, Անձի հոգեբանության ամբիոն):
- Հետազոտության արդյունքները կարող են հիմք դառնալ նոր ուսումնասիրությունների՝ ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների հետ աշխատանքում մեթոդի կիրառելիության, ինչպես նաև ավազանկարչության ազդեցության սահմանների ընդլայնման ուղղությամբ՝ ընդգրկելով հոգեկան տարբեր գործընթացների, անձնային որակների զարգացման, ուսումնական գործընթացի վրա ազդեցության և հոգեբանական տարբեր խնդիրների հաղթահարման վրա ազդեցությունը:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են.

1. Ստեղծարարությունը բարդ և բազմաշերտ ֆենոմեն է՝ բաղկացած պոտենցիալ (ստեղծագործական ներուժ) և ակտուալ (ստեղծագործական ակտիվություն) կողմերից, իր կառուցվածքում ներառում է տարբեր առանցքային և լրացուցիչ բաղադրիչներ, որոնց, մասնավորապես ինքնատիպության, երևակայության, հետաքրքրասիրության, ռիսկի դիմելու հակվածության, բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամության, սեփական ստեղծարարության ընդունման վրա նպատակաուղղված ազդեցությունը նպաստում է ստեղծագործական ներուժի ակտիվացմանը:
2. Վերոնշյալ բաղադրիչների նպատակաուղղված ներգործությունը ստեղծարարության պոտենցիալ կողմի վրա դրդում է ստեղծագործական ակտիվության և արդյունքում նպաստում ստեղծարարության խթանմանը:
3. Ավազանկարչության հեղինակային ծրագիրը՝ շնորհիվ ազատ ավազանկարչության և հատուկ տեխնիկաների համակարգային և

նպատակային ազդեցության հանդիսանում է կրտսեր դպրոցականների ստեղծարարության խթանման մեթոդ:

4. Ավազանկարչությունը արդյունավետ միջոց է կրտսեր դպրոցականների ստեղծարարության բաղադրիչների խթանման համար իր դինամիկության, գործընթացի պարզության, նկարչական նյութի անորոշության, նկարելու միջոցների անսովորության, ինչպես նաև գործընթացի վրա կենտրոնացնելու հնարավորության շնորհիվ:

Արդյունքների հավաստիությունը ապահովվում են ընտրված մեթոդաբանական սկզբունքներով, խնդրին վերաբերող գրականության համակողմանի տեսական վերլուծությամբ, առաջադրված խնդիրների և ստացված արդյունքների համապատասխանությամբ, հետազոտության ընտրանքի ներկայացուցչականությամբ, փորձարարական տվյալների հավաքագրման մեթոդների համապատասխանությամբ: Թեկնածուական ատենախոսության մեջ օգտագործված գիտական գրականությունը և գիտափորձի արդյունքնում ստացված նյութերը բավարար հիմք են հանդիսանում առաջ քաշված խնդիրների տեսական հիմնավորման և գործնական լուծումների համար:

Աշխատանքի վավերացումը իրականացվել է ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի գիտական մի շարք սեմինարների շրջանակներում, ընդգրկելով թե՛ հետազոտության կառուցվածքի, տրամաբանության, ընթացքի, թե՛ ստացված արդյունքների վերլուծությունը:

Աշխատանքի կառուցվածքում ընդգրկված են ներածությունը, երեք գլուխները, եզրակացությունները, գրականության ցանկը և հավելվածները: Օգտագործված գրականության քանակը՝ *113 աղբյուր, առաջարկված գծապատկերների թիվը՝ 5, աղյուսակներինը՝ 16, հիստոգրամներինը՝ 5: Ատենախոսության ընդհանուր ծավալն է 147 էջ:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ ներկայացված են աշխատանքի արդիականությունը, հիմնախնդրի գիտական մշակվածությունը, աշխատանքի նպատակը, խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական հիմքը և հետազոտության կազմակերպումը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փորձաքննությունը, հավաստիությունը և աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Ստեղծարարության էությունը, բովանդակությունը և խթանման ուղիները**» վերնագրով, ներկայացված է երկու ենթագլուխներով:

1.1. Ենթագլխում՝ «Ստեղծարարությունը որպես ինտեգրալ, բազմագործոն հոգեբանական ֆենոմեն» վերնագրով, ներկայացված են ստեղծարարություն երևույթի էության բացատրություններ տարբեր տեսությունների համատեքստում, շեշտադրված է հատկապես հումանիստական ուղղության մոտեցումը, ստեղծարարության բովանդակությունը

1.2. Ենթագլուխը՝ «Մանկության շրջանում ստեղծարարության հիմնախնդիրը» վերնագրով, նվիրված է ստեղծարարության դրսևորման և առանձնահատկությունների վերլուծությանը մանկության՝ մասնավորապես կրտսեր դպրոցական տարիքի համատեքստում: Ներկայացված են զարգացման հոգեբանության ոլորտի տարբեր գիտնականների հայացքները, առանձնակի ընդգծված են Է. Էրիքսոնի մոտեցումները:

Ատենախոսության՝ **«Ավազանկարչության էությունը և դերը հոգեբանական զարգացնող աշխատանքում»** վերնագրով երկրորդ գլուխը ևս ներկայացված է երկու ենթագլուխներով:

2.1. Ենթագլուխը՝ «Ավազով աշխատանքը՝ որպես արտթերապևտիկ միջամտության ձև» վերնագրով, նվիրված է դասական և ձևափոխված ավազաթերապիայի, ավազով զարգացնող աշխատանքի, դրանց առանձնահատկությունների նկարագրմանը, ներկայացված է ավազանկարչությունը՝ որպես ավազով զարգացնող աշխատանքի յուրահատուկ եղանակ:

2.2. «Ավազանկարչության՝ ստեղծարարությունը խթանող առանձնահատկությունները» վերնագրով ենթագլխում ներկայացրել ենք ավազանկարչության բոլոր այն հնարավորությունները, որոնք, ըստ մեր վերլուծության, հնարավորություն կտան զարկ տալու ստեղծարարության խթանմանը:

Ատենախոսության **երրորդ՝ «Կրտսեր դպրոցականների ստեղծարարության խթանման գործընթացում ավազանկարչության դերի հետազոտության արդյունքները»** գլխում ներկայացված են ավազանկարչության մեթոդաբանությունը՝ ավազանկարչության առանձնահատկությունների մանրամասն վերլուծությամբ, ձևավորող գիտափորձի ընթացքը, փուլերը, ընտրանքը, ստացված արդյունքների վերլուծություններն ու մեկնաբանությունները:

Հետազոտության կազմակերպման առաջին փուլում կրտսեր դպրոցական թվով 60 հետազոտվողներին պատահականության սկզբունքով՝ առանց ստեղծարարության մակարդակի մասին տվյալների բաժանել ենք երկու՝ փորձարարական և ստուգիչ խմբերի:

Հետազոտության երկրորդ փուլում նախապես ընտրված մեթոդների միջոցով հետազոտվել է կրտսեր դպրոցականների՝ մեր կողմից հետազոտվող առանձնահատկությունների՝ ստեղծարարության և դրա բաղադրիչների արտահայտվածությունը երկու՝ փորձարարական և ստուգիչ խմբերում:

Երրորդ՝ միջամտության փուլին մասնակցել են փորձարարական խմբի հետազոտվողները, իրականացվել է հեղինակային զարգացնող ծրագիր ավազանկարչության մեթոդով, որի հիմքում ստեղծարարության խթանման՝ մեր կողմից առաջարկված գործառնական մոդելն էր:

Հետազոտության չորրորդ՝ վերջնական գնահատում փուլում իրականացվել է թե՛ փորձարարական, թե՛ ստուգիչ խմբերի հետազոտվողների ստեղծարարության բաղադրիչների կրկնակի գնահատում, որի նպատակն էր խմբերի տվյալների համեմատության շնորհիվ դուրս բերել միջամտության՝ ավազանկարչության ծրագրի արդյունավետությունը:



Նկար 1. Ստեղծարարության խթանման գործառական մոդել

Հետազոտության ընտրանքը կազմել են Երևան քաղաքի տարբեր հանրակրթական դպրոցներում սովորող կրտսեր դպրոցական տարիքի (2-րդ և 3-րդ դասարանների աշակերտներ) 60 երեխաներ՝ 31 աղջիկ, 29 տղա (հետազոտության մեջ սեռի գործոնը չի դիտարկվել): Ընտրանքը կարող ենք համարել ոչ պատահական, քանի որ ի սկզբանե ներգրավվել են հետազոտությանը մասնակցության ցանկություն հայտնածները, բացի այդ, այն ձևավորվել է նախապես դրված որոշակի պահանջների համաձայն: Սրանցից գլխավորը հետազոտության ընթացքում արվեստի դպրոցներ, ստեղծագործական զարգացմանն ուղղված խմբակներ չմասնակցելու պայմանն էր, ինչը առաջադրված էր՝ գլխավորապես ստեղծարարության վրա կողմնակի ազդեցությունը բացառելու, ինչպես նաև գիտափորձի մասնակիցների տվյալների մաքրությունը ապահովելու նպատակով, որպեսզի հնարավոր լիներ ուսումնասիրել ստեղծարարության խթանման մեթոդի՝ ավազանկարչության դերը:

Հետազոտության մեթոդները կարող ենք բաժանել երկու մասին՝ տվյալների հավաքագրման և վերլուծության մեթոդները: Կիրառվել են տվյալների հավաքագրման հետևյալ մեթոդները՝ թեստավորում, անկետավորում, զրույց: Թեստավորման շրջանակներում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝ Ֆ. Վիլյամսի՝ անձի ստեղծագործական բնութագրերի ինքնագնահատման հարցարանը, Ֆ. Վիլյամսի ծնողական հարցարանը՝ երեխայի ստեղծարարության (ստեղծագործական ներուժի) գնահատման համար, Է. Վարտեգի «Շրջաններ» մեթոդիկան, Հեղինակային հեքիաթի շարադրումը: Ընտրված մեթոդներն ու մեթոդիկաները հնարավորինս լրացնում են միմյանց՝ ապահովելով ուսումնասիրվող երևույթի համակողմանի ուսումնասիրությունը: Ինչպես հայտնի է,

ստեղծարարությունը հնարավոր չէ ուսումնասիրել միայն երևույթի որևէ մեկ կողմի կամ դրսևորման որևէ ձևի ուսումնասիրությամբ, ուստի հետազոտության մեջ փորձել ենք ներառել թե՛ հարցարան, որը թույլ կտա հետազոտվող երեխային գնահատել իր ստեղծարար որակները, թե՛ նկարչական մեթոդիկա, որը թույլ կտա արտացոլել երևակայության աշխատանքը, թե՛ ազատ շարադրանքի հնարավորություն տվող մեթոդիկա, թե՛ սեփական ստեղծարարության հանդեպ վերաբերմունքը արտացոլող անկետա: Առավել օբյեկտիվ պատկեր ստանալու նպատակով հետազոտությանը մասնակից ենք դարձրել հետազոտվող երեխաների ծնողներին՝ ինչպես ստեղծարարության հարցարանի լրացման, այնպես էլ երեխայի ստեղծարարության դրսևորումների վերաբերյալ զրույցի շրջանակներում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն

Ստեղծարարության բաղադրիչների հիմնական մասի՝ հետաքրքրասիրության, երևակայության, ռիսկի դիմելու հակվածության, բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամության, ընդհանուր ստեղծարարության (հետազոտվողների և նրանց ծնողների հետազոտության արդյունքներով) մակարդակի հետազոտությունը իրականացվել է Ֆ. Վիլյամսի «Անձի ստեղծագործական բնութագրերի ինքնագնահատման» հարցարանի միջոցով, որից ստացված տվյալներն առավել հավաստի և ճշգրիտ կերպով ներկայացնելու, ինչպես նաև ձևավորող գիտափորձի միջամտության փուլում կիրառված մեթոդի՝ ավազանկարչության արդյունավետությունը հաստատելու համար ներառել ենք մաթեմատիկական վերլուծություն: Կիրառել ենք Սթյուդենտի t պարամետրային չափանիշը կախյալ և անկախ խմբերի համար:

Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ստեղծարարության առանցքային բոլոր բաղադրիչների, ինչպես նաև ստեղծարարության ընդհանուր մակարդակի միջին ցուցանիշները փորձարարական խմբում աճել են, (երևակայություն՝ 15.6-18.3, հետաքրքրասիրություն՝ 17.2-20.0, ռիսկի դիմելու հակվածություն՝ 16.1-20.3, բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամություն՝ 14.9-20.2), ընդ որում, ստուգիչ խմբում ևս նկատվել է որոշ բաղադրիչների արտահայտվածության մակարդակի բարձրացում, սակայն չնչին չափով, ինչի հետ կապված կարող ենք եզրակացնել, որ փորձարարական խմբի մասնակիցների նույն բաղադրիչների կտրուկ աճը պայմանավորված է ավազանկարչության ծրագրի իրականացման հետ: Հետազոտության արդյունքներից պարզ է դառնում, որ.

Ա) ավազանկարչության կիրառումը ունեցել է իր բարենպաստ ազդեցությունը միջամտության փուլին մասնակցած հետազոտվողների ստեղծարարության առանձին բաղադրիչների և ստեղծարարության ընդհանուր մակարդակի խթանման ուղղությամբ, քանի որ, ինչպես միջխմբային համեմատությունն է ցույց տալիս, փորձարարական խմբում նշանակալիության գործակիցը փոքր է 0.05-ից, այսինքն նախնական և վերջնական գնահատման փուլում երկու խմբերի ցուցանիշները նշանակալիորեն տարբեր են միմյանցից:

Բ) փորձարարական խմբում նկատված փոփոխությունները պայմանավորված են ավազանկարչության ծրագրի կիրառմամբ, քանի որ ի տարբերություն ստուգիչ խմբի, փորձարարական խմբի ներսում նախնական և

վերջնական գնահատման փուլերում առկա են նշանակալի տարբերություններ: Ընդ որում կարևոր ենք համարում ընդգծել, որ միջամտությունից առաջ երկու խմբերը հավասար կամ գրեթե հավասար դիրքերում են եղել թե ստեղծարարության առանձին բաղադրիչների, թե ընդհանուր մակարդակով:

Ստեղծարարության մեկ այլ բաղադրիչի՝ ինքնատիպության մակարդակի գնահատման համար կիրառել ենք հեղինակային հեքիաթի շարադրման տեխնիկան: Հետազոտության մասնակիցների հեղինակային հեքիաթները վերլուծության են ենթարկվել՝ հաշվի առնելով հեքիաթի սյուժեի յուրահատկությունը, հարստությունն ու բարդությունը:

Մեր կողմից ուսումնասիրվել և ամփոփվել են նաև փորձարարական խմբի հետազոտվողների ծնողների հետ վերջնական գնահատման փուլում ունեցած զրույցի արդյունքները, որի ընթացում կենտրոնացել ենք առանցքային մի քանի հարցերի շուրջ, որոնք, ինչպես արդեն նշել ենք, վերաբերում էին ավազանկարչության ծրագրի մասնակցության ընթացքում և ծրագրի ավարտից հետո երեխայի մեջ նկատվող փոփոխություններին: Արդյունքների վերլուծության մեջ ներկայացրել ենք հատկապես երկու հարցի շուրջ ծնողների տված պատասխանների ընդհանուր պատկերը տոկոսային հարաբերությամբ, այն է՝ «Ինչպիսի՞ փոփոխություններ եք նկատում Ձեր երեխայի մեջ ավազանկարչության ծրագրին մասնակցելու շրջանակներում» և «Ինչպե՞ս են դրսևորվում Ձեր նշած կողմերը»: Վերլուծության արդյունքում նկատվել է, որ ծնողների կողմից նշված փոփոխությունները վերաբերում են ստեղծարարության տարբեր բաղադրիչներին՝ երևակայությանը, ճկունությանը, ռիսկ պարունակող և բարդ իրավիճակներում կողմնորոշվելու, խոչընդոտներ հաղթահարելու կարողությանը, հետաքրքրասիրությանը և այլն, որոնց դրսևորումները վերաբերում են ինչպես ուսումնական գործընթացին, այնպես էլ առօրյային, շփումներին և այլն: Շատ ծնողներ խոսել են երեխայի արդյունավետ շփումների մասին, ինչը զարմանալի չէ, քանի որ մեր մոտեցմամբ ստեղծարարությունը, լինելով ոչ միայն ինտելեկտուալ, այլև հատկապես անձնային ոլորտի ուժ, կարող է ընդգրկել անձին ամբողջությամբ և տարածվել նրա գործունեության գրեթե բոլոր ոլորտների վրա:

Ամփոփելով հետազոտության արդյունքները ՝ կարող ենք նշել, որ ձևավորող գիտափորձի միջամտության փուլում ավազանկարչության հեղինակային ծրագրի կիրառումը էականորեն նպաստել է մեր կողմից ուսումնասիրված ինտեգրալ հոգեբանական երևույթի՝ ստեղծարարության և նրա առանձին բաղադրիչների մակարդակի փոփոխությանը՝ խթանելով և ակտիվացնելով դրանց դրսևորումը: Կարծում ենք, որ այս ազդեցությունը պայմանավորված է ավազանկարչության՝ որպես ստեղծարարությունը խթանող միջոցի, ավազանկարչության հատուկ տեխնիկաների, ինչպես նաև ավազի՝ որպես ստեղծագործական նյութի առանձնահատկություններով, ինչը հնարավոր է դարձնում կիրառել այն հոգեբանական զարգացնող աշխատանքում ստեղծագործական ներուժի ակտիվացման նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ստեղծարարությունը, տարբեր տեսությունների մեկնաբանության բովով անցնելով, հոգեբանության զարգացման ներկայիս փուլում

ներկայանում է որպես բազմակողմանի և բազմաշերտ հոգեբանական երևույթ: Ստեղծարարության հնարավոր խթանման հարցը իր նշանակալիությամբ և արդիականությամբ կարևոր մարտահրավեր է հոգեբանական գիտության թե՛ տեսական, թե՛ գործնական ուղղվածության ներկայացուցիչների համար: Այս առումով ավազանկարչությունը՝ որպես նկարչության այլընտրանքային եղանակ, կարող է իր ուրույն տեղը զբաղեցնել ստեղծարարության խթանման ուղիների, մեթոդների շարքում՝ շնորհիվ իր ուրույն առանձնահատկությունների և ազդեցության ձևերի:

Սույն աշխատանքի շրջանակներում իրականացված տեսական վերլուծությունը և հետազոտական աշխատանքը թույլ են տալիս մեզ առանձնացնել հետևյալ առավել էական եզրահանգումները.

1. Հիմնվելով ստեղծարարության մեկնաբանման հումանիստական ուղղության հայացքների վրա՝ հնարավոր է պնդել, որ ստեղծարարությունը բոլոր մարդկանց պոտենցիալ կերպով բնորոշ անձնային կարևորագույն որակ է, որը մանկության որոշակի փուլում՝ կրտսեր դպրոցական տարիքում ժամանակավոր անկում է ապրում՝ տարիքային զարգացման առանձնահատկություններով և դպրոցական կրթության ազդեցությամբ պայմանավորված, սակայն այն հնարավոր է խթանել համապատասխան ազդեցության շնորհիվ:
2. Հաշվի առնելով ստեղծարարության՝ որպես ինտեգրալ հոգեբանական ֆենոմենի վերաբերյալ գիտական պատկերացումները և ի մի բերելով ստեղծարար անձի կողմերի մասին տարբեր վերլուծությունները՝ կարող ենք եզրակացնել, որ ստեղծարարության առանցքային բաղադրիչներն են ինքնատիպությունը, հետաքրքրասիրությունը, երևակայությունը, ռիսկի դիմելու հակվածությունը, բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամությունը, ինչպես նաև սեփական ստեղծարարության ընդունումը:
3. Հիմք ընդունելով ստեղծարարության բազմաշերտ՝ պոտենցիալ և ակտուալ կողմերից բաղկացած լինելու մոտեցումը և դուրս բերելով ստեղծարարության բաղադրիչները՝ կարելի է պնդել, որ ստեղծարարության խթանումը ենթադրում է անցում պոտենցիալ կողմից ակտուալի՝ ստեղծարարության դրսևորման, ինչը հնարավոր է ապահովել ստեղծարարության բաղադրիչների վրա ներգործության ճանապարհով:
4. Ավազանկարչության էության բազմակողմանի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մեթոդի՝ ստեղծարարությունը խթանող առանցքային առանձնահատկություններն են.

- ստեղծագործելիս գործընթացի առաջնայնությունը արդյունքի նկատմամբ,
- ստեղծագործելու պատրատի եղանակների բացակայությունը, նկարելու «ճիշտ և սխալ» եղանակների կաղապարից ազատ լինելու հնարավորությունը,
- ավազի՝ որպես ստեղծագործական նյութի անորոշությունը և բազմակի փոխակերպումների հնարավորությունը,
- գործընթացի պարզությունը և հասանելիությունը,
- ստեղծագործելու եղանակների բազմազանությունն ու անսովորությունը,

- գործընթացի դինամիկությունը, ստեղծագործական նյութը անվերջ զարգացման ենթարկելու հնարավորությունը,
- նկարչական նյութի հետ անմիջական շոշափական կոնտակտի հնարավորությունը:

5. Ստեղծարարության խթանմանն ուղղված հեղինակային ծրագրի արդյունավետությունն ապահովող գործոնների վերլուծությունից կարող ենք պնդել ազատ ավազանկարչության և հատուկ ուղղվածությամբ տեխնիկաների միասնական ներգործության նշանակությունը: Հեղինակային ծրագիրը ստեղծարարության բաղադրիչների վրա բազմաֆունկցիոնալ և համակողմանի ազդեցություն ունի, ինչը ենթադրում է, որ.
- ավազանկարչության մեկ առանձին տեխնիկայի կիրառումը նպաստում է ստեղծարարության միանգամից մի քանի բաղադրիչի խթանմանը,
- ծրագիրը հնարավորություն է տալիս ներգործություն ունենալ ստեղծարարության բոլոր առանցքային բաղադրիչների վրա:

6. Հետազոտության սահմաններում իրականցված ձևավորող գիտափորձի արդյունքներից երևում է, որ ավազանկարչության հեղինակային ծրագրի կիրառման արդյունքում զգալիորեն աճել է փորձարարական խմբում ընդգրկված կրտսեր դպրոցականների ստեղծարարության և դրա բոլոր առանցքային բաղադրիչների՝ երևակայության, հետաքրքրասիրության, ռիսկի դիմելու հակվածության, բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամության, սեփական ստեղծարարության ընդունման, ինքնատիպության մակարդակը:
7. Ամփոփելով, կարող ենք նշել, որ ավազանկարչության նպատակաուղղված կիրառումը խթանող ազդեցություն է ունենում կրտսեր դպրոցականների ստեղծարարության բաղադրիչների, մասնավորապես երևակայության, հետաքրքրասիրության, ռիսկի դիմելու հակվածության, բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամության, ինքնատիպության, սեփական ստեղծարարության ընդունման վրա, ուստի հեղինակային ծրագիրը արդյունավետ կերպով կարող է կիրառվել որպես կրտսեր դպրոցականների ստեղծարարությունը խթանող միջոց հոգեբանական զարգացնող աշխատանքում:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Խաչիբաբյան Ս. Ավազաթերապիայի զարգացման միտումները Հայաստանում: Կանթեղ: Գիտական հոդվածներ/.- Եր.: Ասողիկ, 2016, 163-169
2. Խաչիբաբյան Ս. Ստեղծարարության զարգացման գործոնները կրտսեր դպրոցական տարիքում: Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)//Անձ և սոցիալական խնդիրներ: «Ասողիկ» հրատ., Երևան 2016թ., էջ 61-67:
3. Хачибабян С. Особенности и роль рисования песком в развитии детского творчества. Современные проблемы социально-гуманитарных наук. Научно-теоретический журнал; НОЦ "Знание", 2016, 68-72 с.
4. Խաչիբաբյան Ս. Ավազաթերապիայի կիրառումը հոգետրավմա տարած երեխաների հետ աշխատանքում. դեպքի նկարագրություն: Գիտական ընթերցումներ: Հոդվածների ժողովածու.-Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ., 2017, էջ 106-110:
5. Խաչիբաբյան Ս. Ավազանկարչության դերը կրտսեր դպրոցականների ստեղծարարության զարգացման գործընթացում: Արդի հոգեբանություն («Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» 6-րդ միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան 2017, 129-133
6. Խաչիբաբյան Ս. Ավազաթերապիայի պատմությունը և տեղը հոգեթերապևտիկ մեթոդների համակարգում: Արդի հոգեբանություն-գիտական հանդես. #2, Եր., Անտարես, 2018, 39-48
7. Խաչիբաբյան Ս. Անձի ստեղծարարության հիմնախնդիրը հումանիստական հոգեբանության համատեքստում: Կանթեղ: Գիտական հոդվածներ/. Եր.: Ասողիկ, 2018, 158-166
8. Խաչիբաբյան Ս., Խանամիրյան Ի. Ավազանկարչությունը՝ որպես կրտսեր դպրոցականների երևակայության զարգացման խթանիչ: Արդի հոգեբանություն» գիտական հանդես, Երևան 2019, №1(3), 16-25
9. Խաչիբաբյան Ս. Անձի ստեղծարարությունը՝ որպես ժամանակակից աշխարհում հարմարվելու միջոց: Անձի զարգացման խնդիրները գլոբալիզացիայի պայմաններում. Հոգեբանա-մանկավարժական ասպեկտներ - Գիտական հոդվածների ժողովածու, Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի հրատ., Եր.: 2019, 418-423:
10. Խաչիբաբյան Ս. Ավազանկարչության դերը անձի ստեղծարարության խթանման մեջ: «Արդի հոգեբանություն» գիտական հանդես. #2 (5) Եր., Անտարես, 2019, 284-291
11. Խաչիբաբյան Ս., Խանամիրյան Ի. Ստեղծարարության խթանումը ավազանկարչության համակարգված ազդեցության միջոցով (դեպքի նկարագրություն): Проблемы развития личности в условиях глобализации: психолого-педагогические аспекты. Сборник научных трудов Международной научно-практической конференции. 2020, стр 821-829

СОСЭ ХАЧИБАБЯН

РИСОВАНИЕ ПЕСКОМ КАК СПОСОБ РАЗВИТИЯ КРЕАТИВНОСТИ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 – Социальная психология. Защита диссертации состоится 1-ого октября 2021 г. в 14:00 на заседании специализированного совета по психологии 067 ВАК по присуждению учёных степеней при Ереванском государственном университете, по адресу: г. Ереван, 0025, ул. Абовяна 52а.

РЕЗЮМЕ

Актуальность. Актуальность работы обусловлена следующими обстоятельствами:

• глобальные изменения в общественной, социальной сферах, которые требуют от современного человека новые и креативные подходы, что в свою очереь обуславливает растущий интерес к креативным людям;

• необходимость новых исследований и формулировок проблемы креативности в условиях меняющегося в бешеном ритме мира;

• недостаток исследований проблемы детской креативности;

• важность выявления новых способов развития креативности в новой эпохе;

• отсутствие изучения метода рисования песком как психологического способа в развивающей работе.

Цель исследования: изучить роль рисования песком в процессе развития креативности младших школьников.

Задачи исследования:

1. Исследовать основные подходы к пониманию креативности, ее проявлений в детском возрасте, а также к возможностям ее развития посредством теоретического анализа.

2. изучить основные компоненты в структуре креативности путем всестороннего анализа.

3. Проанализировать и выявить основные особенности рисования песком, способствующие развитию креативности.

4. Разработать методологию развития компонентов креативности, и на основе этого составить авторскую программу по методу рисования песком.

5. Выявить и обосновать продуктивность авторской программы по рисовани песком в процессе развитя компонентов креативности младших школьников.

Научная новизна:

• Проведен анализ рисования песком как психологического метода, выявлены главные особенности метода и их роль в развитии основных компонентов креативности.

• Разработана функциональная модель развития креативности младших школьников, основанная на понимании креативности с точки зрения гуманистического направления.

• На основе выделенной функциональной модели составлена авторская программа, направленая на развитие компонентов креативности младших школьников, и проведена групповая работа по этой же программе.

Теоретическая значимость:

• Креативность и ее развитие проанализированы в рамках как классических, так и новых теорий гуманистического направления, в частности в рамках теории творческой связи Н. Роджерс.

• Проведен системный анализ содежания креативности, в результате которого выявлены основные компоненты креативности.

• Проведен глубинный анализ особенностей метода рисования песком, что позволит расширять представления об этом методе рисовния и о его психологическом значении.

Практическое значение работы:

• В рамках работы разработана и проведена авторская программа, что обогатит инструментарий психологической работы, направленной на развитии креативности.

• Данные о психологических особенностях метода рисования песком, полученные путем всестороннего анализа, включены в учебный материал предметов "Арт-терапевтические методы в психологическом консультировании" и "Арт-терапия в работе с детьми и подростками" (ЕГУ, факультет философии и психологии, кафедра психологии личности).

• Результаты исследования могут стать основой для новых исследований, направленных на выявление возможностей метода в работе со взрослыми, а также на расширения рамок границ психологического воздействия рисования песком, включая влияние на развитие психических процессов, личностных качеств, а также преодоление разных психологических проблем.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Общий объем работы в компьютерном формате составляет 147 страниц, включая приложения.

SOSE KHACHIBABYAN

SAND PAINTING AS A STIMULUS FOR PRIMARY SCHOOL CHILDREN CREATIVITY DEVELOPMENT

Dissertation for the degree of candidate of psychological sciences in the specialty 19.00.03 "Social Psychology".
The defense of the dissertation will take place on october 1st 2021 at 14:00 at a meeting of the specialized council on psychology 067 of the Higher Attestation Commission for awarding degrees at Yerevan State University.
Address: 0025, Abovyan str, 52a., Yerevan, Armenia.

ABSTRACT

Relevance. The current work is actual due to the following factors:
-global changes in political, public, and social fields which require the contemporary person to apply creative approaches which in its turn raises the demand for creative people
-necessity of new studies and definitions of creativity fundamentals in the rapidly changing world
-lack of studies of infancy creativity fundamentals
-importance of finding out new efficient ways to develop creativity in current times
-gap of study of sand painting as a psychological development method.

The aim of the study is to find out the role of sand painting in developing creativity of primary school children.

Research Objectives:

1. Analyze the main approaches of creativity, its demonstration in infancy, and its development in the humanistic branch based on studies of scientific resources.
2. Single out the key components of creativity structure through comprehensive analysis.
3. Analyze and single out the main peculiarities of sand painting contributing to creativity development
4. Develop and set a clear methodology to develop creativity, and a sand painting signature program based on the very methodology.
5. Find out how effective the sand painting signature program is in the creativity development of primary school children.

The **scientific novelty** of the current work is:

- Sand painting has been analyzed as a psychological work method, the main peculiarities of the sand painting method, and their role in developing the key components of creativity have been singled out.

- A practical method to develop creativity among primary school children has been defined based on the approaches of creativity definition in the humanistic branch.
- A sand painting signature program with a goal to develop creativity components among the primary school children has been formed and implemented based on the practical method of creativity development in the framework of the current work.

Theoretical value

- Creativity and its development has been analyzed in the context of both classical and new theories of humanities particularly the theory of creativity connection of N. Rogers.
- A systematic analysis of creativity content has been done, as a result the main components of creativity have been singled out.
- An in-depth analysis of the peculiarities of sand painting has been done which allows to expand the overall picture of this type of painting and its psychological importance.

Practical value

- A signature program has been developed and implemented which will enrich the toolkit of psychological work of creativity development.
- The data obtained as a result of comprehensive analysis of the peculiarities of sand painting is included in the courses of "Consultation on art-therapy methods" and "Art-therapy in the work with infants and adults" (YSU faculty of philosophy and psychology, department of psychology of personality).
- The results of the research may ground new studies on method applicability in the work with infants and adults, as well as on the expansion of the effects of sand painting including its effect on various psychological processes, enhancing personality qualities, its influence on educational process, and overcoming various psychological disorders.

The table of contents:

The table of contents of the work consists of introduction, three chapters, conclusion, bibliography, and appendix. The total work consists of 147 pages in computer format including the appendix.